

# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртытиун» (образование) еженедельник 15.03.2023թ. չորեքշաբթի թիվ 11 (1088)

## Մեծերը



ՖԱՏԱԼՈՒՐ

Ո՛ւշ-ո՛ւշ են գալիս, բայց ո՛չ ուշացած. ծնվում են նրանք ծի՛շտ ժամանակին: Եվ ժամանակից առաջ են ընկնում, Դրա համար էլ չեն ներում նրանց... **Պարույր ՍԵՎԱԿ**

Մեծերը գալիս, հայտնվում, ապրում, գործում, նահատակվում, անմահանում են մե՛զ համար: Դեռ երկրային կյանքի ընթացքում **անանձնանում**, որքան մե՛ծ՝ իրենց անհատականությամբ, այնքան դյուրին տարրալուծվում, որպես **աղը աշխարհի**, ընկղմվում մեր էության մեջ, մեր ինքնությունը են կազմում...

Մեծերը գալիս, հայտնվում, վերադառնում են անվերջ, ամեն մի պահի, երբ մեր **գոյությունը** է վտանգվում, որովհետև պահապաններն են մեր գոյության, որովհետև նրանց առաքելությունը մեր գոյությունն է հենց, ու իրենք էլ մեր գոյության մեջ **ներկա՝ են ընդմիշտ:**

**Գ.Մ.**

Մարտի 13-ին Եղիշե Չարենցը դարձավ 126 տարեկան:

## Գարնանային

**Գարուն է:** Հողն արթնացել, դեն է նետել իր ճերմակ սավանը, ոտքի ելել նոր քայլել սովորող մանկան պես, անվարժ շարժումներով իր կանաչ հանդերձներն է փորձում հագնել...

Ու մինչ **ժամանակն** օրեր անց կիստի գարնանային գիշերահավասարը, եւ **Տիեզերքը** կսկսի իր նոր տարեգրությունը՝ **Բնության** նոր տարին, **Մարդն** իր հոգեւոր զարթոնքն ուղղորդում է դեպի **Աշխատանք:**

**Ընտանիքը** եւ **Հասարակությունը**, համալրվել լավատեսությամբ, նոր **Մեկնարկի** ակնկալիքով, մաքրում են տունն ու բակ, փողոց ու քաղաք...

Առջևում գարնան **երազն** է, ամռան **Գործը**, աշնան **Հուշը**... Ու բոլորը միասին՝ **Կյանքը՝ ժամանակի** ու **Տարածության** հետ **երկնքից** մշտապես մեզ իջնող պարզելը մեծագույն:

**Գ.Մ.**

տե՛ս նաեւ՝ էջ 8-9



## Գարնանային արձակուրդը կմեկնարկի մարտի 20-ից

Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում **մարտի 20-ից** կսկսվի գարնանային արձակուրդը: Համաձայն «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների»՝ **3-12-րդ դասարանների աշակերտներին գարնանային արձակուրդ կտրամադրվի 2023 թվականի մարտի 27-ից մինչև ապրիլի 2-ը ներառյալ: Առաջին դասարանցիների գարնանային արձակուրդը կտեւի մարտի 27-ից մինչև ապրիլի 2-ը ներառյալ:**

## Մարտի 8-ի առթիվ

### ՀՀ Վարչապետ Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը



Սիրելի՛ կանայք, սրտանց շնորհավորում եմ բոլորիդ եւ յուրաքանչյուրիդ՝ Կանանց միջազգային օրվա առիթով: Այս տոնը մեզանում միշտ կարելու է եղել, բայց հիմա կարելու ենք առանձնակի:

Այսօր մենք նախ գլուխ ենք խոնարհում մեր բազմաթիվ որդեկորույս մայրերի առաջ, ում որդիներն իրենց կյանքը տվեցին՝ հանուն հայրենիքի: Նրանցից շատերը նոր կյանք ու հույս են տալիս բոլորիս, սուգը հաղթահարելով՝ մայրության բերկրանքը կրկին ապրելու եւ իրենց նահատակված զավակներին այսպիսով հարություն տալու միջոցով:

Մենք գլուխ ենք խոնարհում պատերազմում այրիացած մեր այն կանանց առաջ, ովքեր իրենց ուսերին են պահում գլխատված ընտանիքների հոգսի ծանրությունը եւ իրենց զավակներին կոչում են ապրելու, կրթվելու, հաղթահարելու բոլոր դժվարությունները ու հաղթելու ճակատագրի մարտերում:


Այսօր մենք գլուխ ենք խոնարհում այն կանանց առաջ, ովքեր ամուր քիկուկն ու ապավեն են զինված ուժերում ծառայող իրենց ամուսիններին, ովքեր երկրի, պետության անվտանգության պատասխանատվությունն են կրում:

Այսօր մենք գլուխ ենք խոնարհում այն կանանց առաջ, ովքեր իրենք են ծառայում Ձիմված ուժերում՝ նաեւ ընդգծելով մեր երկրի կյանքում կանանց դերակատարման ընդլայնումը, որ տեղի է ունենում բոլորիս աչքի առաջ: Եվ սա ո՛չ գաղափարախոսական, ո՛չ քաղաքական, ո՛չ էլ նույնիսկ աշխարհայացքի հարց է:

շարունակությունը՝ էջ 2

### Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը

Գարնան զարթոնքով լեցուն մարտի 8-ի այս տոնական օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքն ենք բերում մեր մայրերին, քույրերին ու դուստրերին եւ երախտագետ սրտով մեծարում նրանց նվիրյալ ու սիրառատ ջանքերը՝ ընտանեկան կյանքի բարօրության ապահովման գործում, ինչպես նաեւ՝ գովարժան ավանդը պետական ու հասարակական կյանքի տարբեր ասպարեզներում:



Սիրելի՛ մայրեր եւ քույրեր, ընտանիքին ու հայրենիքին ձեր նվիրումով եւ պահպանվում եւ սերնդեսերունդ փոխանցվում մեր ազգային ավանդույթները, ձեր հոգատար դաստիարակությամբ են հասակ առնում ազգի եւ Եկեղեցու արժանավոր զավակները, ովքեր մեր պատմության վճռորոշ հանգրվաններում, ինչպես նաեւ արցախյան պատերազմի օրերին եւ ներկայիս, իրենց սիրանքներով ու անձնագոհությամբ հերոսանում են հայրենյաց պաշտպանության սրբազան առաքելության մեջ:

Այսօր ամենքիս պարտքն է անխոնջ աշխատանքով ապահովել մեր երկրի անվտանգ ու խաղաղ ապագան, միասնական ոգով աջակից լինել Արցախում շրջափակման մեջ գտնվող մեր ժողովրդին, առանձնակի հոգածություն եւ ուշադրություն ցուցաբերել մեր վիրավորված զավակներին եւ նահատակ քաջորդիների ընտանիքներին:

Հայրապետիս աղոթքն ու մաղթանքն է, որ Տերը հաստատուն պահի տիկնանց եւ օրհորդաց հավատքի, բարի գործերի ու առաքինությունների մեջ եւ շնորհի արելատ կյանքի երջանիկ օրեր: Հայցում ենք, որ Բարձրալին Աստված խաղաղ ու բարօր պահպանի մեր հայրենիքը եւ մեր աշխարհասփյուռ ժողովրդին՝ պարգեւելով ուժ ու կորով՝ կերտելու իր լուսավոր ապագան:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհները, սերն ու խաղաղությունը թող լինեն ձեզ ամենքիդ հետ. ամեն:

Մարտի 8-ի առթիվ

Հանրապետության նախագահ Վահագն ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ շնորհավորական ուղերձը



Սիրելի՛ կանայք, Սրտանց շնորհավորում եմ ձեզ՝ Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի առթիվ: Այս տոնը մեր հանրությունը նշում է յուրօրինակ ջերմությամբ եւ գնահատանքով, ինչը վկայում է ձեր անգնահատելի դերի ու ներդրման մասին եւ ձեր հայրերի, ամուսինների, եղբայրների ու որդիների անսահման սիրո դրսեւորումն է:

Մաղթում եմ ձեզ անսպառ ընտանեկան երջանկություն եւ չխանրող զեղեցկություն:

Սիրելի՛ կանայք, Կանանց միջազգային օրը բոլորիս համար առիթ է, որպեսզի մենք հաստատենք մեր պատրաստակամությունը՝ կերտել հավասար իրավունքների եւ հնարավորությունների հասարակություն:

Այս ճանապարհին մեր երկրում դեռ շատ անելիքներ կան, եւ մեր խնդիրն է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կորսեւորվեն ձեր բոլոր կարողություններն ու գիտելիքները:

Ի սրտե ցանկանում ու մաղթում եմ ձեզ առավել ակտիվ մասնակցություն ունենալ մեր երկրի հասարակական քաղաքական ու մշակութային կյանքի անցուղարձեւում, որովհետեւ ձեր ներկայությամբ արդեն ցանկացած միջավայր դուք դարձնում եք առավել հանդուրժող, կառուցողական ու ստեղծարար:

Սիրելի՛ մայրեր, քույրեր եւ դուստրեր, գարնանային այս գեղեցիկ տոնի առթիվ կրկին շնորհավորում եմ ձեզ եւ մաղթում քաջառողջություն, անձնական երջանկություն ու անսահման սեր, հաջողություններ ձեր բոլոր ձեռնարկումներում:

ՀՀ Վարչապետ Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը

սկիզբը՝ էջ 1

Արդեն բավական երկար ժամանակ կանայք մեր երկրի բնակչության մեծամասնությունն են եւ հասկանալիորեն պետք է իրենց վրա վերցնեն ավելի մեծ պատասխանատվություն: Եվ տրամաբանական է, որ այսօր մեր երկրում ավելի ու ավելի հաճախ կանայք ստանձնում են դերակատարումներ, պատասխանատվություններ ու պաշտոններ, որոնք աննախադեպ են մեր երկրի պատմության համար, եւ մեր հանրությունը պիտի քաջալերի այս գործընթացը:

Կանայք ավելի ու ավելի շատ են ներգրավվում տնտեսական գործունեության մեջ, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման ոլորտում, դատաիրավական եւ իրավապահ համակարգերում, ինչպես վերը նշեցի՝ զինված ուժերում: Եվ սա մեր երկրի զարգացման գրավականն է, որովհետեւ կանանց հսկայական պոտենցիալը լիարժեք չօգտագործել՝ նշանակում է լինել անհեռատես:

Հանրային, պետական կյանքի բոլոր ոլորտներում կանանց դերակատարման ընդլայնմանը շատերը հոռետեսությամբ են վերաբերվում՝ ընդգծելով, որ կինը հայկական ավանդական ընտանիքի հենասյունն է: Սա, իհարկե, ճիշտ է եւ աներկբա: Բայց հայկական ավանդական ընտանիքի նույնպիսի հենասյուն է տղամարդը ու ոչ ոք չի անհանգստանում, երբ տղամարդը ծառայում է բանակում, ուսուկանությունում, զբաղվում է տնտեսական գործունեությամբ, կան ակտիվ հանրային-քաղաքական կյանք է վարում: Մյուս կողմից, իհարկե, պետությունը հատուկ հոգածության առարկա պիտի դարձնի մայրությունը, ինչը եւ անում ենք հետևողականորեն:

2023 թվականի մարտի 8-ին հենց այս համատեքստը կարելու համարեցի ընդգծել, որովհետեւ Կանանց միջազգային օրն այն մասին չէ, որ կանայք փխրում են ու խոցելի: Կանանց միջազգային օրն այն մասին է, որ կանայք կարող են ավելին:

Սիրելի՛ կանայք, շնորհավորում եմ բոլորիդ եւ յուրաքանչյուրիդ՝ Մարտի 8-ի օրվա առիթով: Շնորհակալություն ձեզ, որ անում եք ավելին եւ միշտ պատրաստ եք անել ավելին:

Եվ ուրեմն՝

Կեցցե՛ Ազատությունը,

Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը,

Կեցցեն մեր երեխաները, որ ապրելու են Ազատ եւ Երջանիկ Հայաստանում:

Նախագահական նստավայրում

«Մենք»-ը պետք է լինի կրթված, կիրթ, երկիրը սիրող եւ ապագային միտված ծրագրեր ունեցող անհատը»

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը նախագահական նստավայրում հյուրընկալել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) Գյումրու մասնաճյուղի մի խումբ ուսանողների, ինչպես նաեւ Շիրակի մարզի մի շարք խոշորացված համայնքների ավագ դպրոցների աշակերտների:

«Առանձնահատուկ վերաբերմունք ունեն երիտասարդների, առավել եւս՝ այն երիտասարդների հանդեպ, ովքեր ձգտում են կրթություն ստանալ եւ լավագույնս դրսեւորվել հասարակության մեջ», - ողջունելով երիտասարդներին ասել է նախագահ Խաչատուրյանը: Նախագահը նշել է, որ իր խոսքը շարադրելու է «Առաջադեմ պետության ստեղծման տեսլականը» խորագրի շուրջ, որը ներկայացված է եղել երիտասարդների կողմից առաջարկված հարցերի շրջանակում:

Վահագն Խաչատուրյանը կարճ պատմական ակնարկով անդրադարձել է նոր անկախացած Հայաստանի դժվարություններին եւ պետականության կերտման սկզբունքներին: «Մի կարելու սկզբունք կար 1990-ականներին, որ որդեգրեցինք եւ մինչ-էս հիմա առաջնորդվում ենք դրանով: Մենք գտնում էինք, որ Հայաստանը պետք է լինի ժողովրդավարական երկիր... Այն սկզբունքները, որով ձեւավորվեց պետությունը 1990-ական թվականներին, դրանք կյանքում սկսեցին կիրառվել եւ իրականություն դառնալ մինչեւ որ 1995 թվականին Սահմանադրությամբ ամրագրվեցին»:

Նախագահը խոսել է նաեւ մեր երկրի ձեռքբերումների, արված բացթողումների եւ խնդիրների մասին:

«Մի կարելու համգամանք, որ կցանկանայի ապագայում ձեզ համար որպես սկզբունք կիրառելի դարձնեք ցանկացած իրավիճակում: Միշտ հեշտ է մեղավորներ փնտրել այլ վայրում... Սակայն, առաջին հերթին, մեղավորներ պետք է մեր մեջ գտնենք,



համարձակություն ունենանք գնահատել դա, եւ իհարկե դրա մեջ որեւիցե տարօրինակ, ոչ մարդկային երեւոյթ չկա: Այո, մեղավոր ենք եղել, եւ պետք է կարողանանք այդ սխալն ուղղել: Միայն, միգուցե, կայացել է նրանում, որ ժամանակին արձագանք չի եղել, կամ միգուցե ծնողներին, մեծերին, երիտասարդներին չենք լսել, միգուցե ինչ-որ հանգամանքներ այդ պահին հաշվի չենք առել, սակայն, բոլոր դեպքերում, պետք է պատրաստ լինենք այդպիսի իրավիճակներում գտնել հարցի պատասխանը՝ թե ինչու այդպես ստացվեց»:

Անդրադառնալով խորհրդային Միության փլուզումից հետո ստացած ազատություններին՝ նախագահ Խաչատուրյանն ասել է. «Այդ ժամանակ արդեն մենք էինք ընտրում մեր գաղափարախոսությունը, հասարակության մեջ մեր տեղը, դերը, դիրքը եւ մեզ դրսեւորելու հնարավորություններն էին շատ մեծ»:

Հիմա մենք ունենք ավելի մեծ այդպիսի հնարավորություններ: Ամենակարեւորն այն է, որ մենք բոլորս ունենք հավասար հնարավորություններ մեզ դրսեւորելու համար:

Մենք բոլորս հնարավորություն ունենք



մեր գիտելիքները, մեր կարողությունները դրսեւորել, ինքներս ներկայանալի դառնալ եւ նաեւ հաջողություններ արձանագրել»:

Նախագահը խոսել է նաեւ պետություն-քաղաքացի հարաբերությունների եւ պարտականությունների, պետական ինստիտուտների կայացման կարեւորության մասին: «Երբ հարց ենք բարձրացնում, թե ինչպիսի պետություն ենք ուզում ունենալ, ապա այդ չափանիշների մեջ առաջինը պետք է լինի սիրելու հատկությունը: Իսկ ինչպես ենք մենք վերաբերվում մեր սիրելի էակին, լինի երեխա, հայր, ծնող, ընկեր, ընկերուհի, մեծահասակ: Շատ զգույշ, խնամքով, նուրբ, ուզում ենք հաշվի առնել նրա բոլոր ցանկությունները եւ այլն: Մենք ինչքան ենք մեր երկիրը սիրում: Մեր երկիրը, եթե սիրենք, ժամանակը չի բավականացնի, մենք պետք է սամտիմետրերով ճանաչենք մեր երկիրը»:

Խոսելով այսօր մեր երկրի առջեւ ծառայած դժվարությունների եւ դրանց լուծումների մասին՝ նախագահ Խաչատուրյանը նշել է. «Մենք պետք է հաղթահարենք բոլոր խնդիրները, պետք է կարողանանք զարգանալ, ավելի մրցունակ դառնանք, մեր երկրի

բարեկեցությունը բարձրացնենք, գտնենք հարցի պատասխանը, թե ինչպես ենք լուծելու մեր առջեւ ծառայած խնդիրները»:

Այստեղ ամենակարեւոր հարցը կարող է լինել, թե ով է լուծելու: Լուծողը դուք եք, մենք ենք, մենք բոլորս միասին: Շատ կարեւոր է, թե «մենք»-ի մեջ ինչ ենք տեսնում: Այդ «մենք»-ը պետք է լինի կրթված, կիրթ, երկիրը սիրող եւ ապագային միտված ծրագրեր ունեցող անհատը: Մենք այլ պոտենցիալ չունենք»:

Այն հնարավորությունները, որ դուք ունեք որպես երիտասարդներ, պետք է օգտագործեք կրթություն ստանալու համար: Մեր ապագան մենք տեսնում ենք կրթված հասարակության մեջ, որում պետք է լինի նաեւ համապատասխան միջավայր: Մեր հաջողությունները պայմանավորված են լինելու նրանով, թե մենք ինչքանով պատրաստված կլինենք, կրթված կլինենք, գիտելիք կունենանք եւ մեր առջեւ հստակ կտեսնենք մեր պատկերացրած երկրի տեսլականը»:

Նախագահ Վահագն Խաչատուրյանը պատասխանել է նաեւ երիտասարդների հարցերին:


Աշխարհի հետ

Մարտի 8-ի առթիվ

Երկօրյա այց Վրաստան

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ շնորհավորական ուղերձը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական երկօրյա այցով մեկնել է Վրաստան՝ երկկողմ համագործակցության և համատեղ հետաքրքրություններ կայացնող մի շարք հարցեր քննարկելու նպատակով: Պատվիրակության կազմում են ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, Երեւանի Վ. Պետրոսյանի անվան թիվ 51 հիմնական դպրոցի տնօրեն Լուսինե Ղասաբջյանը:



Ժաննա Անդրեասյանի ընդունել է Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին: Հանդիպմանը մասնակցել են նաև Վրաստանի կրթության և գիտության նախարար Սիխեիլ Չիտենկելին և Վրաստանում ՀՀ դեսպան Աշոտ Սմբատյանը: Ողջունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարին Իրակլի Դարիբաշվիլին կարելի է հայ-վրացական բազմակողմ հարաբերությունները և արդյունավետ համագործակցությունը: Նշվել է, որ Վրաստանին և Հայաստանին կապում են դարավոր պատմությունը և բարիդրացիական հարաբերությունները: Վրաստանի վարչապետը վստահություն է հայտնել, որ կրթու-

մերի միջև բարեկամական կապը: Նախարարը շնորհակալություն է հայտնել Վրաստանում հայերենի ուսուցմամբ հանրային դպրոցներին աջակցելու համար: Այս համատեքստում նա կարելի է ՀՀ-ի և Վրաստանի միջև դպրոցական և միջբուհական համագործակցությունը, որի կարելի է ձեռքբերումներից են Երեւանի Վարդգես Պետրոսյանի անվան թիվ 51 հիմնական դպրոցի և Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի միջև համագործակցության հուշագրի, ինչպես նաև Երեւանի պետական համալսարանի և Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարանի միջև փոխըմբռնման հուշագրի ստորագրումը:

շարունակությունը՝ էջ 4

Սիրելի՛ կանայք, ջերմորեն շնորհավորում եմ՝ Կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի առթիվ:



Գարնան այս օրը առիթ է՝ մեկ անգամ եւս ընդգծելու և խրախուսելու ձեր ակտիվ գործունեությունը տարբեր ասպարեզներում: Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներում, որտեղ իրականացվում է դաստիարակության, արժեքների ստեղծման ու փոխանցման գործընթացը, լավագույնս պետք է բացահայտվի կնոջ ուժը՝ նրա գնահատումը կապելով առաջին հերթին իրավունքների և դերակատարման բարձրացման, ստեղծարար ներուժի խթանման հետ:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներում է, որ մենք կարող ենք և պետք է առանձնահատուկ խրախուսենք մեր աղջիկներին՝ առաջ գնալու, հասնելու հաջողությունների, հասկանալու ու հավատալու, որ իրենք ամեն ինչ կարող են:

Այսօր Լեռնային Ղարաբաղում բազմաթիվ կանայք ցույց են տալիս դիմացկունության ու խիզախության այնպիսի որակներ, որ բոլորիս կարող են օրինակ ծառայել: Բազմաթիվ կանայք մեր կողքին կրում են իրենց հարազատի, սիրելի մարդու կորստի վիշտը, ու մեր համերաշխությամբ ու հետևողական ջանքով է նաև, որ այդ դժվարությունները պիտի հաղթահարենք:

Կանանց համերաշխությունը մեծ ուժ է, և այդ ներուժի ամբողջական իրացումն, իրավամբ, կարող է դառնալ հասարակության զարգացման ու առաջընթացի շարժիչ ուժը: Մասնագիտական որակները միախառնելով կանացի նրբանկատությանն ու մայրական հոգատարությամբ՝ կարող ենք ստեղծել այն արդյունքները, որոնք ապահովելու են որակապես նոր հասարակություն և զարգացող պետություն:

Սիրելի՛ կանայք, եղեք խիզախ, համարձակ ու նպատակասլաց: Մաղթում եմ ձեզ մասնագիտական հաջողություններ, ստեղծարար նախաձեռնություններ, առողջություն և անձնական երջանկություն:

«Կանանց տեղն ու դերը Հայաստանում»

Տարբեր ասպարեզներում հայտնի կին գործիչների՝ ըստ արժանվույն գնահատման խնդիրը

Մարտի 8-ի կապակցությամբ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանի նախաձեռնությամբ տեղի է ունեցել «Հնարավորություններ և խոչընդոտներ. կանանց տեղն ու դերը Հայաստանում» խորագրով համաժողովը:



Համաժողովին ներկա են եղել ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, տարբեր ոլորտների կին գործիչներ: Նախարար Ժաննա Անդրեասյանին իր ելույթում անդրադարձել է կնոջ պատմական դերակատարմանը և տարբեր ասպարեզներում հայտնի կին գործիչների՝ ըստ արժանվույն գնահատման խնդիրը: Նախարարն իր խոսքում, մասնավորապես, նշել է. «Այսօրվա իմ խոսքն ուզում եմ կառուցել՝ իբրև հարցերի շարք: Հարցերը բարձրացնում եմ՝ հրավիրելով միասին մտածելու դրանց շուրջ, որովհետև մարտի ութն ինձ համար առաջին հերթին հարցեր տալու օր է: Հարցեր, որ օգնում են հասկանալ ինչ է այս օրը նշանավորում, ինչու է այն մեր օրացույցի մաս, ինչու է այն շարունակում մնալ արդիական: Այս ամենի մեջ կարելի է

պատմականության գիտակցումը. այն, ինչ մենք այսօր ունենք կամ չունենք, շարունակվող պատմության հետևանքն ու ընթացքն է: Այն, ինչ մեզ համար այսօր ինքնընտանրանքային ընկալելի է, օրինակ, որ մենք կարող ենք գնալ սրճարան, տաքատ կրել, մեքենա վարել, ընտրության մասնակցել, հրամաններ տալ, ի վերջո, հետևանք է այն պայքարի, որը ժամանակին բազմաթիվ կանանց կյանքն ու երջանկություն է արժեցրել: Պետք է հիշենք այդ դժվարությունների պատմությունը՝ հասկանալով, որ այսօրվա դժվարությունները եւս հաղթահարելի են: Այս տարի մենք մի աշխատանք սկսեցինք՝ առանձնացնել այն գործիչների ցանկը, որոնք տարբեր ոլորտներում, պատմական տարբեր դարաշրջաններում նշանակալի դեր են ունեցել մեր պետականության զարգացման և պարթեզների համար: Նպատակ կար՝ նրանց հուշարձանների մոտ հարգամքի միջոցառումներ կազմակերպել: Կազմեցինք երկար ու կարճ ցանկեր՝ տարբեր գերատեսչությունների մասնակցությամբ: Հետո առաջացավ հարց՝ իսկ ո՞ր են կանայք: Արդյոք որեւէ կին ներառվել է որեւէ ցանկում: Օրինակ՝ Ալեհուշ Տերյանը, որ Թեհրանի համալսարանի երկրաֆիզիկայի ինստիտուտի արեգակնային աստղադիտարանի հիմնադիրներից մեկն է, Իրանի առաջին կին պրոֆեսորը, Իրանի առաջին կին աստղագետն ու աստղաֆիզիկոսը: Իր տունը նա կտակել էր Նոր Զուղայի հայ համայնքին, որպեսզի այնտեղ կարողանան բնակվել կացարան չունեցող ուսանողները, իսկ ինքը վախճանվել ծերանոցում: Կամ Դիանա Աբգարը, որն աշ-

ներին՝ 1942-1945 թվականներին: Հետո եկավ ավելի բարդ հարցը. եթե նույնիսկ կանայք ներառվեն ցանկում, որտե՞ղ են նրանց հիշատակը նյութականացնող արձանները, կիսանդրիները, որոնց շուրջ կարելի է տալ այդ հարգանքի տուրքը: Պրպտեցի արձանները՝ սկսելով Երեւանից: Մի հետաքրքիր օրինակություն հայտնաբերեցի. կանանց բոլոր արձանները ապանձնավորված են, արտահայտում են որեւէ հավաքական կերպար կամ զգացմունք: Տղամարդկանց արձանները գրեթե միշտ կոնկրետ մարդկանց, գործիչների արձաններ են: Կինը մեզանում արժեւորված է առավելապես իբրև կնոջ արձանները, բայց ոչ իբրև կոնկրետ մարդ՝ կոնկրետ անունով և ազգանունով, կոնկրետ գործերով և աշխատանքով: «Մայր Հայաստան», «Սպասում», «Ջարթոնք», «Ավետում», «Տիրամոր արցունքը»... սրանք Երեւանում տեղադրված կնոջ կերպարով արձաններն են, որոնք, թեև ներկայացված են կանանց կերպարով, սակայն մյուս կողմից՝ կանանց դարձնում են այնպիսի կերպարներ, որոնց Կանոն կրճատվել է՝ առանց հողեղենության, առանց կոնկրետ դրսևորման», - ասել է Ժաննա Անդրեասյանը: շարունակությունը՝ էջ 5

Երկօրյա այց Վրաստան

սկիզբը՝ էջ 3

Նա հայտնել է, որ համապատասխան աշխատանքներ են տարվում՝ ընդլայնելու համագործակցության շրջանակը՝ ընդգրկելով 33 եւ Վրաստանի այլ ուսումնական հաստատություններ ու կրթագիտական կառույցներ եւս:

Ժամանա Անդրեասյանն անդրադարձել է նաեւ փորձի փոխանակման ծրագրեր իրականացնելու հնարավորությունը ուղղված 33 դպրոցներում վրացերենի որպէս երրորդ օտար լեզվի ներդրմանը, ինչպէս նաեւ միջպետական ծրագրի շրջանակում իրականացվող կրթաթոշակային ծրագրի կարելիությունը, որի միջոցով 33 քաղաքացիները հնարավորություն են ստանում բարձրագույն կրթություն ստանալ Վրաստանի բուհերում, իսկ Վրաստանի քաղաքացիները՝ 33 բուհերում:

Մշակույթի ոլորտում նախարարը կարելի է թեթևաբանորեն Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գործունեությունը եւ շնորհակալություն հայտնել Վրաստանի կառավարությանը՝ մշտապէս ցուցաբերվող աջակցության համար:

Նա հայտնել է հայկական կողմի պատրաստակամությունը՝ 2023-24 թթ.-ին կազմակերպելու փոխադարձ մշակույթի օրեր: Ժամանա Անդրեասյանը հայտնել է, որ աշխատանքները համակարգելու նպատակով հայկական կողմը մշակել է փոխըմբռնման հուշագրի նախագիծ, որը դեռեւս գտնվում է ներպետական համաձայնեցման փուլում եւ շուտով կներկայացվի վրացական կողմին փոխհամաձայնեցման:

Քննարկվել են նաեւ սպորտի ոլորտում համագործակցությանն առնչվող հարցեր: 33 ԿԳՄՍ նախարարը Վրաստանի վարչապետին տեղեկացրել է Հայաստանում նախատեսվող միջազգային մարզական միջոցառումների Ծանրամարտի եվրոպայի մեծահասակների եւ Սամբոյի մեծահասակների աշխարհի առաջնությունների մասին:

Նախարարն անդրադարձել է նաեւ երիտասարդական քաղաքականության բնագավառում համատեղ ծրագրեր իրականացնելու կարելիությունը՝ ընդգծելով հայ-վրացական երիտասարդական ֆորումի անցկացումը, որի նպատակն է զարգացնել երկխոսությունը երիտասարդների միջեւ: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Նախարար ժամանա Անդրեասյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելիի հետ: Ողջունելով ԿԳՄՍ նախարարի գլխավորած պատվիրակությանը՝ Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելին առանձնահատուկ կարեւորել է հայ-վրացական բարեկամական հարաբերությունները: Նա վստահություն է հայտնել, որ ստորագրվող հուշագրի շրջանակում կիրականացվեն համատեղ հայ-վրացական գործունեություններ, որոնք կնպաստեն հայ-վրացական բարեկամական կապերի ամրապնդմանը: Վրաստանի կրթության եւ գիտության նախարարը կարեւորել է նաեւ համագործակցությունն աստղաֆիզիկայի բնագավառում:

ԿԳՄՍ նախարար ժամանա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել իրավերի եւ ընդունելության համար՝ կարեւորելով բարեկամական սերտ համագործակցությունը 33-ի եւ Վրաստանի միջեւ: Երկկողմ հարաբերությունների շարունակական զարգացումն ապահովելու նպատակով նա առաջարկել է զարգացնել եւ ընդլայնել կրթության եւ գիտության բնագավառներում համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունները:

Նշվել է, որ համագործակցելով Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության հետ՝ շուրջ 18000 կտոր դասագիրք



եւ մեթոդական գրականություն առաքվել է թեթևաբանորեն Վրաստանի՝ հայերենով ուսուցմամբ հանրային դպրոցներին փոխանցելու համար: Ժամանա Անդրեասյանը նաեւ հայտնել է ԿԳՄՍ նախարարության պատրաստակամությունը՝ իրականացնելու հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչների ու դասավարդների մասնագիտական վերապատրաստում:

ԿԳՄՍ նախարարն առաջարկել է ընդլայնել Երազնուս+ համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունը, որը կնպաստի երկու պետությունների բուհերի միջազգայնացմանը եւ կայուն զարգացման ապահովմանը: Ժամանա Անդրեասյանն առաջարկել է նաեւ զարգացնել փոխգործակցությունը գիտության ոլորտում՝ իրականացնելով համատեղ կրթագիտական ծրագրեր, որը հնարավոր է դիտարկել նաեւ Horizon Europe ծրագրի շրջանակում:

Հանդիպման ընթացքում ժամանա Անդրեասյանը եւ Միխեիլ Չխենկելին ստորագրել են «33 կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության միջեւ կրթության եւ գիտության ոլորտում համագործակցության մասին» հուշատուր: Փաստաթղթով նախանշվում են համագործակցության զարգացման ուղղությունները, նախատեսվում է նաեւ փոխանակման ձեւաչափով կրթաթոշակային տեղերի ծրագիր:

Հանդիպման ավարտին ԿԳՄՍ նախարար ժամանա Անդրեասյանը Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելին հրավիրել է Հայաստան:

Վրաստան կատարած պաշտոնական այցի շրջանակում նախարար ժամանա Անդրեասյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է Իվանե Ջավախիշվիլիի անվան թեթևաբանական համալսարանի ռեկտոր **Ջաբա Սամուշիայի** հետ:

Ողջունելով նախարարի գլխավորած պատվիրակությանը՝ ռեկտորը պատրաստակամություն է հայտնել լավագույնս համագործակցելու կրթության եւ գիտության ոլորտներում: Ջաբա Սամուշիան առանձնահատուկ կարեւորել է միջբուհական համագործակցությունը՝ ընդգծելով, որ նախարարի առաջին այցը թեթևաբանական համալսարանի խորհրդանշական է: Նրա խոսքով՝ հայ-վրացական հարաբերություններում գիտական կապերն ունեն մեծ նշանակություն: Ռեկտորն անդրադարձել է համալսարանում 1922 թվականին հիմնադրված հայագիտական ամբիոնի գործունեությանը եւ զարգացման հեռանկարներին: Նա նշել է, որ հայագիտության ամբիոնում կրթությունը կազմակերպվում է բոլոր մակարդակներում՝ բակալավրիատ, մագիստրատուրա եւ ասպիրանտուրա: Ջաբա Սամուշիան տեղեկացրել է, որ բակալավրիատում ավելացրել են եւս 60 կրեդիտ, որի շրջանակում կպատրաստվեն նաեւ համապատասխան ուսուցիչներ: Ռեկտորը վստահություն է հայտնել, որ միջբուհական

համագործակցությամբ կիրականացվեն մի շարք նախաձեռնություններ՝ ուսանողների, դասախոսների եւ հետազոտողների փոխանակման ծրագրեր:

ԿԳՄՍ նախարար ժամանա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար՝ կարեւորելով հայ-վրացական բարեկամական կապերը: «Հայ-վրացական ընդհանուր պատմությունը մեր արժեքն է», - նշել է նախարարը՝ ընդգծելով, որ խորհրդանշական է հայագիտությանն ու վրացագիտությանն ուղղված համագործակցությունը:

Ժամանա Անդրեասյանն առանձնահատուկ կարեւորել է թեթևաբանական համալսարանի հայագիտական ամբիոնում մանկավարժական կադրերի պատրաստումը: Նրա խոսքով՝ 33 կառավարության ծրագրում առանձնահատուկ տեղ է գտել դպրոցներում տարածաշրջանային լեզուների զարգացումը, եւ այդ նպատակով սեպտեմբերից 33 երեք դպրոցում դասավանդվում է վրացերեն: Նախարարը վստահություն է հայտնել, որ ԵՊՀ-ն մեծ պատրաստակամությամբ կհամագործակցի թեթևաբանական համալսարանի հետ, որի շրջանակում կիրականացվեն համատեղ կրթական ծրագրեր: Ժամանա Անդրեասյանը վստահեցրել է, որ նախարարությունը կնպաստի այդ համագործակցության զարգացմանը:

Նախարարը հայտնել է, որ ներկայում օտարերկրյա պետություններում գործող բուհերում եւ կրթագիտական կենտրոններում իրականացվում է հայագիտական կենտրոնների եւ ամբիոնների ստեղծման ծրագիր: 33 պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվում է 13 հայագիտական կենտրոնների գործունեության զարգացման ծրագիր:

Ժամանա Անդրեասյանը նշել է, որ ուրախ կլինի տեսնել թեթևաբանական համալսարանը եւ դրա հայագիտական ամբիոնը 2023 թվականի հունիսին կայանալիք հայագիտական խորհրդածրոյի աշխատանքներին:

Հանդիպման ավարտին ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը եւ թեթևաբանական համալսարանի ռեկտոր **Ջաբա Սամուշիան** ստորագրել են համագործակցության հուշագիր:

Ժամանա Անդրեասյանի գլխավորած պատվիրակությունն այցելել է նաեւ թեթևաբանական համալսարանի 104 հանրային դպրոց, որտեղ հանդիպել է տնօրեն **Իրինա Ժամկոչյանի** եւ մանկավարժական անձնակազմի հետ: Նախարարը կարեւորել է հայ-վրացական բարեկամական կապերը եւ կրթության ոլորտում իրականացվող բոլոր համատեղ նախաձեռնությունները՝ ուղղված երկկողմ կապերի ամրապնդմանն ու զարգացմանը:

«Անկեղծ եւ խորին շնորհակալություն եմ հայտնում ձեր աշխատանքի համար. դպրոցի ամեն մի անկյունից երեւում է ձեր աշխատանքի սրտացավությունն ու հոգատարությունը: Ուրախ եմ, որ հենց այս

պատմական շենքում եւ այս միջավայրում եք իրականացնում կրթության գործընթացը: Ուրախ եմ նաեւ, որ ձեզանից շատերն անցած տարի մասնակցել են ուսուցիչների ատեստավորմանը՝ հայոց լեզու եւ գրականություն առարկաներից, եւ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությանը շարունակական համագործակցության համար», - մանկավարժների հետ հանդիպմանը նշել է նախարար ժամանա Անդրեասյանը:

Նա նաեւ նշել է, որ թե՛ տարածաշրջանում, եւ թե՛ ամբողջ աշխարհում Քովիդի համավարակը կրթական համակարգի համար դարձել էր անեմանած փորձություններից մեկը, եւ ուսուցիչներն այդ ընթացքում հերոսական աշխատանք են կատարել՝ այդ պայմաններում երեխաների կրթությունն ապահովելու համար:

Այցի ընթացքում Երեւանի Վարդես Պետրոսյանի անվան թիվ 51 հիմնական դպրոցի եւ թեթևաբանական համալսարանի դպրոցի միջեւ ստորագրվել է համագործակցության հուշագիր:

Այդ կապակցությամբ՝ նախարար ժամանա Անդրեասյանը նշել է, որ այս գործընթացը պետք է լինի շարունակական. «Մենք պետք է խրախուսենք համատեղ ծրագրերը, եւ ձեր դպրոցն այս հարցում կդառնա առաջատարների, որին, հուսով եմ, մյուս դպրոցները եւս կհետեւեն: Մենք էլ կխրախուսենք դպրոցներին՝ զարգացնելու երկկողմ համագործակցությունը, որի միջոցով կզարգանա նաեւ մեր երկու հարեւան ժողովուրդների դարավոր բարեկամությունը: Սա շատ կարեւոր միջոց է, որը կարող է նպաստել ընդհանուր նպատակներին մեր բարդ տարածաշրջանում՝ ունենալու խաղաղ, արժանապատիվ, կայուն զարգացման հնարավորություն»:

Այցի շրջանակում 33 ԿԳՄՍ նախարարն այցելել է թեթևաբանական համալսարանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոն, որտեղ հանդիպել է թատրոնի տնօրինությանը եւ անձնակազմին, ինչպէս նաեւ ծանոթացել թատրոնի վերանորոգման աշխատանքների ընթացքին:

33 ԿԳՄՍ նախարարին ուղեկցել է Վրաստանի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ **Իրակլի Գվիխաշվիլին**: Նշվել է, որ թատրոնի վերաբացումը նախատեսվում է 2023 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Առաջարկվել է թատրոնի պաշտոնական վերաբացումը դիտարկել Վրաստանում Հայաստանի մշակույթի օրերի շրջանակում: Կողմերն առանձնահատուկ կարեւորել են թատրոնի գործունեությունը եւ վերահաստատել իրենց պատրաստակամությունը՝ աջակցելու թատրոնի գործունեությանը:

Նախարարի հաջորդ կանգառը թեթևաբանական Սուրբ Էջմիածին եկեղեցին եւ հայորդաց տունն էին, որտեղ նա ծանոթացել է տնօրինության եւ սաների հետ: Հայորդաց տան տնօրեն **Ե. Մարկոսյանը** նախարարին ներկայացրել է կրթամշակութային կենտրոնի եւ կիրակնօրյա դպրոցի գործունեությունը, հոգեւոր կապը համայնքի հետ, որն ունի առանձնահատուկ դերակատարություն՝ երեխաներին հայոց լեզու, գրականություն, պատմություն եւ մշակույթ դասավանդելու գործում:

Նշվել է, որ կազմակերպվող մշակութային միջոցառումներն ունեն առանձնահատուկ նշանակություն՝ երեխաների մոտ հայեցի կրթությունը եւ մշակույթը զարգացնելու առումով: Պայմանավորվածություն է ձեռք բերվել իրականացնել համատեղ կրթամշակութային միջոցառումներ եւ կազմակերպել փոխադարձ այցեր:

Նախարարն այցելել է նաեւ հայ գրողների պանթեոն, որտեղ հարգանքի տուրք է մատուցել նրանց հիշատակին եւ ծաղիկներ խոնարհել շիրիմներից:

Հեղինակ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Աջակցելու նպատակով

Ուշադրությունն ու զգոնությունը պետք է բազմապատիկ մեծ լինեն, երբ գործ ունենք երեխաների անվտանգության հետ

Կապանի բժշկական կենտրոնում շաբաթը մեկ անգամ 10-ի վթարի հետեւանքով տուժած 24 դպրոցականներից եւ ուսուցիչներից 13-ը:

Նրանց այցելության էր գնացել ԳԳՄՍ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Սյունիքի մարզպետարանում տեղի ունեցած կարճատեւ խորհրդակցության ընթացքում նախարարին ներկայացվել է իրավիճակը: Այնուհետեւ նախարար Ժաննա Անդրեասյանն ու Սյունիքի մարզպետ Ռոբերտ Դուկասյանն այցելել են Կապանի բժշկական կենտրոն, որտեղ բուժօգնություն են ստանում վթարից տուժածները: Նախարարն ու մարզպետը զրուցել են նրանց հետ, մարզել շուտափույթ ապաքինում: «Սյունիքի մարզում նախօրեին տեղի ունեցած ավտովթարն իսկապես ողբերգություն է: Պետք է կատարվի վերլուծություն, թե ինչու է նման իրավիճակ ստեղծվել: Իրավապահ մարմիններն, իհարկե, իրենց գործն անում են, քննությունն ընթացքի մեջ է, բայց ԿԳՄՍ նախարարությունը, որպես կրթության ոլորտի լիազոր մարմին, պետք է հատուկ վերլուծություն իրականացնի, թե երեխաների տեղափոխման գործընթացը, ընդհանրապես, ինչպես է կազմակերպվում: Մեր ուշադրությունն ու զգոնությունը պետք է բազմապատիկ մեծ լինեն, երբ գործ ունենք երեխաների անվտանգության հետ: Համապատասխան չափորոշիչներն ու պահանջները պետք է շատ հստակ լինեն: Վերահսկողության մեխանիզմները նույնպես



կարգավորված եւ խիստ պետք է լինեն, երբ խոսում ենք երեխաներին տեղափոխող տրանսպորտային միջոցների մասին», - նշել է նախարարը:

Նրա խոսքով պետք է գործեն միասնական ստանդարտներ՝ անկախ նրանից, թե երեխաների տեղափոխումը որ կազմակերպության կողմից է իրականացվում: Տվյալ դեպքում վթարված ավտոբուսի ծառայությունը պատվիրակված է եղել մասնավոր կազմակերպության կողմից, սակայն, ըստ նախարարի, դա խնդրի կարգավորման հետ որեւէ կապ չունի. որակի միասնական չափորոշիչ սահմանմամբ բոլորի համար ընդհանրական պահանջ

ներ կլինեն: «ԿԳՄՍ նախարարությունն իրականացնում է տեղեկատվության հավաքագրում բոլոր այն դպրոցներից, որտեղ տրանսպորտային տեղափոխման ծառայություն է կազմակերպվում: Ընդ որում՝ այս խնդիրը վերաբերում է ոչ միայն դպրոց հաճախելիությանը, այլ նաեւ էքսկուրսիաների կազմակերպման ժամանակ օգտագործվող փոխադրամիջոցներին», - ասել է նախարարը:

Ժաննա Անդրեասյանը նաեւ նշել է, որ ողբերգական ավտովթարի հետեւանքով տուժած դպրոցականներին եւ ուսուցիչներին աջակցելու նպատակով ԿԳՄՍ նախարարությունն անընդհատ կապի մեջ է

մարզպետարանի հետ: «Շատ ցավալի է, որ պատահարի հետեւանքով ուսուցչուհի է զոհվել. ցավակցություն եւ զորակցություն են հայտնում հարազատներին: Կատարվածը ողբերգություն է թե՛ դպրոցի, թե՛ աշակերտների, թե՛ մեզ համար», - նշել է նախարարը:

Ասեմք, որ երեխաներից շատերն արդեն դուրս են գրվել, մյուսների վիճակը գնահատվում է բավարար, դպրոցի աշխատակիցներից մեկը, որի վիճակը գնահատվում է ծանր, տեղափոխվել է մայրաքաղաքի բուժհաստիքներին մեկը, մյուսների վիճակը կայուն է, ստանում են անհրաժեշտ բուժօգնություն:

«13 հոգի ենք ընդունել՝ 6 մեծահասակ, 9 երեխա, մեկը տեղափոխվել է Երեւան, մեկը վերակենդանացման բաժանմունքում է, մնացածը՝ բաժանմունքներում: Երեխաներից մեկի մոտ ազդրի կոտրվածք, մյուսների մոտ սալջարդ է», - նշել է Կապանի բժշկական կենտրոնի տնօրեն Ասատուր Ասատրյանը:

Հիշեցնենք, որ մարտի 10-ին Կապան-Նորաշենիկ ավտոճանապարհին տեղի էր ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար. Օխտար գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտներին եւ անձնակազմին տեղափոխող ավտոբուսը դուրս էր եկել ավտոճանապարհի երթեւեկելի հատվածից եւ կամրջից (մոտ 5 մ բարձրություն) ընկել Աճանան գետը:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տարբեր ասպարեզներում հայտնի կին գործիչների՝ ըստ արժանվույն գնահատման խնդիրը

սկզբը՝ էջ 3

«Մինչդեռ առաջ գնալու, սեփական ուժերին վստահելու համար մեր կանանց, մեր աղջիկներին պետք են կոնկրետ օրինակներ, մարդիկ, որ ցույց են տալիս, որ դա հնարավոր է,- շարունակել է նախարարը: «Վերջին տարիներին Ջապել Եսայանի արձանն է բացվել. 2021 թվականին բոստոնահայ բարերարներ Վիլտոր Ջարուզյանը եւ տիկին Ջուդի Սարյանը, ում տանը Բոստոնում լինելու պատիվ են ունեցել, պատվիրել են հայ արձակագիր, հրապարակախոս եւ քաղաքական գործիչ Ջապել Եսայանին նվիրված ինքնատիպ հուշարձանը: Հուշարձանի բացման արարողությունը տեղի է ունեցել 2022 թվականի հոկտեմբերի 9-ին, Ջապել Եսայան ազդրի գնեսի կենտրոնի այգում: Եվ Ջուդի Սարյանը հենց այս կոնկրետության պակասն է շեշտել իր խոսքում. «Որոշ տարիներ առաջ մի խումբ հայ կանայք՝ Հայաստանից, ԱՄՆ-ից, Կանադայից եւ այլ երկրներից, գիտակցեցին, որ Հայաստանում չկա կնոջ որեւէ արձան, որը կոնկրետ անուն կունենա, քանի որ կանանց բոլոր արձանները խորհրդանշական էին: Այս բացը լրացնելու համար մենք պետք է կին ընտրեինք, որը նշանակալի դերակատարում է ունեցել թե՛ Արեւմտյան, թե՛ Արեւելյան Հայաստանում: Այդ կինը Ջապել Եսայանն է»:

Կարծում են՝ սա է մեր այսօրվա ամենամեծ խնդիրը. կոնկրետ օրինակներով ցույց տալ մեր կանանց, որ ամեն ինչ հնարավոր է, եւ իրենք ամեն ինչ կարող են:



Նախորդ տարվա վերջին ոլորտի փորձագետները, մարզիչները, լրագրողները որոշեցին տարվա տասը լավագույն մարզիչներին: Նրանց մեջ երկու կին կար, որոնց հետ բախտ ունեցա շփվել պարզեները հանձնելու ժամանակ:

Նրանցից մեկը՝ Անին, 24 տարեկան է, նախորդ տարի դարձել է Եվրոպայի բռնցքամարտի առաջնության հաղթող, չեմպիոն: Հարցնում են՝ ինչպես վերաբերվեց ընտանիքի բռնցքամարտով զբաղվելու որոշմանը: «Վատ, երկար ժամանակ չէին

ընդունում, փորձում էին համոզել, մտածում էին՝ դեմքս կվնասեմ, համոզում էին գոնե այլ մարզածեւ ընտրել, օրինակ՝ մարմնամարզություն: Հետո հասկացան իմաստ չունի, չեն համոզվելու», - ասում է:

Նախորդ շաբաթ եղա Արմավիր քաղաքում, որտեղ ապրում է Անին եւ այցելեցի մարզադպրոցը, որտեղ նա պարապել է: Իր հաջողություններից հետո մարզադպրոցում ավելացել են աղջիկները: Նրանք արդեն տեսել են Անին, որն իր նպատակի հետեւից գնացել է ու գնացել են Անիի հե-

տեւից՝ իրենց սեփական երազանքներով ու նպատակներով: Անին իր հետեւից աղջիկների համար ճանապարհ է բացել: Այդ ճանապարհը բացում է յուրաքանչյուր կին, որ իր ընտրած ոլորտում, իր զբաղմունքի մեջ չի վիստվում, առաջ է գնում:

Խնդրել են Անին, որ շարունակի առաջ գնալ, ու մեր անվանի մարզիկների անուններով բացվող մարզադպրոցների շարքում մարզադպրոց կառուցենք իր անունով, նաեւ մեր մյուս հրաշալի կին մարզիկների անունով է:

Անդրադառնալով գիտության մեջ կանանց ներգրավվածության խնդրին՝ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ կան տարիներով արմատացած համակարգային խնդիրներ, ինչի մասին փաստում է նաեւ բարձրագույն կրթություն ստացողների մասին պաշտոնական վիճակագրությունը: Մասնավորապես՝ STEM ուղղվածությամբ բարձրագույն կրթությամբ կանայք քիչ են, այն դեպքում, երբ երբ ընդհանուր բարձրագույն կրթություն ստացողների մեջ կանանց տեսակարար կշիռն ավելի մեծ է:

Եզրափակելով խոսքը՝ Ժաննա Անդրեասյանը հիշատակել է իրեն նախկինում ուղղված «Ի՞նչ է պետք կնոջը երջանկության համար» հարցին ինքնաբերաբար տրված պատասխանը՝ ինչ որ պետք է մարդուն:

«Կանայք հսկայական ուժ ունեն, ամեն մեկն առանձին եւ նաեւ իրենց հավաքականությամբ ու համերաշխությամբ: Չորեղացնենք միմյանց, սիրելի կանայք, ու գործեղացնենք մեր պետությունը», - եզրափակել է նախարարը:

«Դիջիթեր 2022»

Ազգային եւ համամարդկային արժեքների հեկոդ

Երեւանի Կ. Դեմիրճյանի անվան մարզա-համերգային համալիրում մարտի 10-12-ն անցկացված «Դիջիթեր 2022» տեխնոլոգիական համաժողովի շրջանակում կազմակերպված պանելային քննարկմանը մասնակցել է 33 կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը:



Երկու տարի փորձարկվում է: Հանրակրթության պետական չափորոշիչ գերակա ուղղություններից մեկը PՏՃՄ առարկաների ուժեղացումն է»,- նշել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը:

Պանելային քննարկումը նվիրված էր Հայաստանում ԳՏՃՄ (STEM) մասնագիտացումներում կրթության որակի հիմնախնդիրների բացահայտմանը եւ լուծումներ գտնելուն:

Արաքսիա Սվաջյանը, հանդես գալով որպես քննարկման բանախոս, նախ անդրադարձել է Հայաստանում ՏՏ ոլորտի առաջընթացին, ձեռքբերումներին եւ զարգացմանը, այնուհետեւ նշել է, որ կան նաեւ բազմաշերտ ու բազմամակարդակ խնդիրներ:

Նախարարի տեղակալը շեշտել է նաեւ նախնական ու միջին մասնագիտական կրթության կարեւորությունը նշելով, որ տարիներ շարունակ աշակերտները դպրոցից միանգամից ընդունվել են բուհ, եւ նրանք հնարավորություն չեն ունեցել կողմնորոշվելու աշխատաշուկայում մրցունակ մասնագիտություն ընտրելու հարցում, իսկ այսօր փորձեր է արվում լրացնելու բացը:

Երկու տարի փորձարկվում է: Հանրակրթության պետական չափորոշիչ գերակա ուղղություններից մեկը PՏՃՄ առարկաների ուժեղացումն է»,- նշել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը:

Քննարկման ընթացքում Արաքսիա Սվաջյանն անդրադարձել է ծրագրի վերջնական նպատակին, խոսել է ազգային եւ համամարդկային արժեքների վրա հիմնված, 33 զարգացման միտված արդյունավետ եւ միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգի ձեւավորման տեսլականի մասին: Նախարարի տեղակալը մանրամասնել է նաեւ ծրագրի ռազմավարական ուղղությունները, որոնք են ստեղծել մասնակցային կրթական միջավայր, բարձրացնել կրթության արդյունավետությունը, միջազգայնացնել եւ արտահանել կրթական ծառայությունները:

Հայաստանում ԳՏՃՄ (STEM) մասնագիտացումներում կրթության որակի հիմնախնդիրների վերաբերյալ պանելային քննարկմանը, որպես բանախոսներ, մասնակցել են 33 բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը, «EPAM»-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն Բենիամին Գյուրջյանը, «Quantori» ընկերության ծրագրերի գծով փոխտնօրեն Արտյոմ Խոզայանովը, «Վոլո» ընկերության տնօրեն, համահիմնադիր Արմեն Քոչարյանը: Քննարկումը վարել է «Ամերիա» խորհրդատվական ընկերության ղեկավար Տիգրան Ջրբաշյանը:

Նշենք նաեւ, որ պանելային քննարկումն անցկացվել է հարցուպատասխանի ձեւաչափով, ներկաները հնարավորություն են ունեցել իրենց հուզող հարցերն ուղղելու բանախոսներին:

«Դիջիթեր 2022» տեխնոլոգիական համաժողովը համախմբել է տեխնոլոգիական ոլորտի շուրջ 120 ընկերությունների եւ ավելի քան 30 բանախոսների 9 երկրներից:

Արտադարձական

Շաբաթական 20 ժամ՝ 1 դրույքաչափի համար

33 կառավարության միտումնաբերական եւ արժանացել «Առողջապահական, հոգաբարձության (խնամակալության), մանկական դաստիարակչական, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման, կապի եւ աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշխատանքի եւ հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանելու մասին» որոշման մեջ լրացում կատարելու մասին նախագիծը:

Ըստ այդմ արտադարձական ուսուցանողներին աշխատաժամանակի տեւողությունը սահմանվել է շաբաթական 20 ժամ՝ մանկավարժական աշխատանքի 1 դրույքաչափի համար բացառությամբ մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների: Վերջիններիս աշխատանքի եւ հանգստի առանձնահատկությունները սահմանվում են նշված կազմակերպության կանոնադրությամբ կամ ներքին կարգապահական կանոններով:

Նշենք, որ գործող որոշմամբ՝ արտադարձական ուսուցանողներին աշխատանքի կարող են դասավանդել շաբաթական 24 ժամ, որը, ըստ էության, համարժեք է 1 դրույքի: Հարկ է նկատել, որ գործող որոշման համապատասխան կետն իրականում կարգավորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատող ուսուցանողներին եւ հատուկ կամ մասնագիտացված ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատանքի կատարման համար աշխատաժամանակի տեւողությունը:

Արտադարձական դաստիարակությունն իրականացվում է մանկապատանեկան ստեղծագործական եւ գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական եւ արվեստի դպրոցների, պատանեկան կենտրոնների, տեխնիկների, բնասերների եւ տուրիստական կայանների, մարզադպրոցների, առողջարարական ճամբարների եւ արտադարձական դաստիարակություն իրականացնող այլ կազմակերպությունների միջոցով:

Ըստ այդմ արտադարձական ուսուցանողներին աշխատաժամանակի տեւողությունը սահմանվել է շաբաթական 20 ժամ՝ մանկավարժական աշխատանքի 1 դրույքաչափի համար բացառությամբ մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների: Վերջիններիս աշխատանքի եւ հանգստի առանձնահատկությունները սահմանվում են նշված կազմակերպության կանոնադրությամբ կամ ներքին կարգապահական կանոններով:

Նշենք, որ գործող որոշմամբ՝ արտադարձական ուսուցանողներին աշխատանքի կարող են դասավանդել շաբաթական 24 ժամ, որը, ըստ էության, համարժեք է 1 դրույքի: Հարկ է նկատել, որ գործող որոշման համապատասխան կետն իրականում կարգավորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատող ուսուցանողներին եւ հատուկ կամ մասնագիտացված ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատանքի կատարման համար աշխատաժամանակի տեւողությունը:

Չնայած արտադարձական ուսուցանողներին աշխատաժամանակի տեւողությունը սահմանվել է շաբաթական 20 ժամ՝ մանկավարժական աշխատանքի 1 դրույքաչափի համար բացառությամբ մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների: Վերջիններիս աշխատանքի եւ հանգստի առանձնահատկությունները սահմանվում են նշված կազմակերպության կանոնադրությամբ կամ ներքին կարգապահական կանոններով:

Չնայած արտադարձական ուսուցանողներին աշխատաժամանակի տեւողությունը սահմանվել է շաբաթական 20 ժամ՝ մանկավարժական աշխատանքի 1 դրույքաչափի համար բացառությամբ մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների: Վերջիններիս աշխատանքի եւ հանգստի առանձնահատկությունները սահմանվում են նշված կազմակերպության կանոնադրությամբ կամ ներքին կարգապահական կանոններով:

Արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան

33 կառավարության միտումնաբերական եւ արժանացել «Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր (եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու կարգը եւ ձեւը հաստատելու մասին» որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագիծը:

Այն պայմանավորված է 33 արտաքին առևտրի հարթակի եւ պետական կառավարման մարմինների միջև փոխգործակցության մեկ միասնական հարթակի ներդրմամբ: Համաձայն որոշման՝ մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) ստանալու համար ֆիզիկական եւ իրավաբանական անձինք հայտը եւ ուղեկցող փաստաթղթերը պետք է ներկայացնեն էլեկտրոնային եղանակով՝ 33 արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան էլեկտրոնային հարթակում (www.trade.gov.am) հասանելի «Թույլատվական փաստաթղթեր» (www.sw.gov.am) համակարգի միջոցով՝ ենթահայտ լրացնելու եւ Կառավարության սահմանած կարգով նույնականացում անցնելու միջոցով՝ 33 կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն:

Լիազոր մարմնի կողմից եզրակացությունը տրամադրվում է էլեկտրոնային եղանակով: Եզրակացությունը, բացառությամբ 33 պետական կառույցների կարիքների համար իրականացվող գործարքների, անհաղթահարելի ուժի առկայության դեպքերի, ինչպես նաեւ օտարերկրյա պետական մարմիններին, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց ներկայացնելու անհրաժեշտության դեպքի, կարող է տրամադրվել նաեւ թղթային տարբերակով:

Օտարերկրյա քաղաքացիների հայտերը կարող են մուտքագրել 33 կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության համապատասխան աշխատակիցները: Այսպիսով՝ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան համակարգի ներդրման արդյունքում՝ կստեղծվեն առավել հարմարավետ պայմաններ, քանի որ արտաքին առևտրի շրջանակում 33 օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի ստացման եւ ներկայացման գործընթացը կիրականացվի էլեկտրոնային համակարգի միջոցով:

Բացի այդ՝ այն համահունչ կլինի «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև մշակութային արժեքների տեղափոխման մասին» համաձայնագրի պահանջներին, որով նախատեսվում է մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման եզրակացությունների տրամադրման թվայնացում, տեղեկատվության փոխանակում եւ այլն:

Կրթությունն աշխարհում

Ավստրալիա



Կրթության անհրաժեշտությունը մայր- ցամաքում առաջացավ առաջին վերաբնա- կիչների հետ, ովքեր վայրէջք կատարեցին Ավստրալիայի ափերին 1788 թվականին: Ավստրալիայում առաջին դպրոցները բաց- վել են Սիդնեյի Անգլիկան եկեղեցու (Անգլի- կան եկեղեցի, բողոքական եկեղեցիներից մեկը: Ծիսակատարությամբ եւ կազմակեր- պական սկզբունքներով ավելի մոտ է կաթո- լիկականին: Անգլիկան եկեղեցին եւս ըն- դունում է Աստվածաշունչը եւ չի մերժում Ս. Ավանդությունների դերը աստվածաշնչական ճշմարտությունները մեկնաբանելու գոր- ծում) կողմից, 18-րդ դարի վերջին: Կաթոլիկ երեխաները ստիպված էին հաճախել անգ- լիկան դպրոցներ, իսկ որբերն ինքնաբերա- բար դառնում էին անգլիկաններ: Հետագա- յում դպրոցները սկսեցին գործել այլ դավա- նանքների ենթակայության ներքո:

1831 թվականին այդ ժամանակվա վար- չապետի եւ Վելինգտոնի դուքսի նախաձեռ- նությամբ, Վիլյամ IV-ի (Վիլյամ IV, Մեծ Բրի- տանիայի եւ Հանովերի թագավոր) հովա- նավորությամբ հիմնադրվեց ամենահին անկախ դպրոցը՝ Թագավորական դպրոցը՝ Պարրամատտան («The King's School, Parramatta»):

Սինչեւ 1836 թվականը Նոր Հարավային Ուելսի գաղութի բոլոր դպրոցները բացա- ռապես անգլիկան էին, մինչեւ գլխավոր դատախազ եւ բարեկարգիչ Ջոն Փլանքեթը մշակեց այսպես կոչված «եկեղեցու ակ- տը», ըստ որի՝ անգլիկանները, կաթոլիկնե- րը եւ պրեսբիտերիները (Պրեսբիտերական- ներ (երիցականներ), կալվինականության հետեւորդներ՝ առաջացած Շոտլանդիա- յում, 16-րդ դարում. կուսակցություն 17-րդ դարում՝ անգլիկան հեղափոխության շրջա- նում) հավասար էին իրավունքներով: Հե- տագայում այդ ակտին ավելացան մեթո- դիստները (Մեթոդիզմ (անգլ.՝ Methodism, պաշտոնապես՝ մեթոդիստական եկեղեցի), քրիստոնեական բողոքականության դրսե- որումներից մեկը, որը գլխավորապես տա- րածված է Ամերիկայի Միացյալ Նահանգ- ներում եւ Մեծ Բրիտանիայում: Ծագել է XVIII դարում՝ առանձնահատուկ անգլիկան եկեղեցուց: Հիմնական սկզբունքն է՝ հե- տեւորականորեն եւ մեթոդաբար պահպա- նել ավետարանական պատվիրանները: Մեթոդիստները քարոզում են կրոնական հեզություն ու խոնարհություն): Դա հնարա- վորություն տվեց 1847 թվականին ստեղծել առաջին կաթոլիկ դպրոցը Թասմանիա կղ- ճում:

1872 թվականին Վիկտորիան դարձավ առաջին գաղութը, որը հիմնեց առաջին աշ- խարհիկ դպրոցը: Հաջորդ 20 տարիների ընթացքում մյուս գաղութները հետեւեցին նրա օրինակին:

1850 թվականի հոկտեմբերի 1-ին Սիդ- նեյում բացվեց առաջին համալսարանը, որը մինչ օրս մայրցամաքի ամենահին հա- մալսարանն է: 1853 թվականին համալսա- րան բացվել է Մելբուռնում, 1874 թվակա- նին՝ Ադելաիդայում, 1890 թվականին՝ Թաս- մանիա կղզում: 1909 թվականին համալսա- րան է բացվել Քվինսլենդում, իսկ 1911 թվականին՝ Արեւմտյան Ավստրալիայում: Այս բոլոր համալսարանները կազմում են Sandstone համալսարանների խումբը:

Երկրորդ համաշխարհային պատերազ- մից հետո Ավստրալիայի կառավարությու- նը նշեց կրթության կարեւոր դերը երկրի հետպատերազմյան տնտեսության զար- գացման գործում: Սկսեցին բացվել նոր ու- սումնական հաստատություններ: 1948- 1975 թվականներին համալսարանների թի- վը վեցից հասավ տասնիննի, իսկ ուսանող- ների թիվը՝ 32000-ից հասավ 148000-ի:

1980-ականների կեսերին Ավստրալիա- յում անցկացվեց մաթեմատիկական առա- ջին մրցույթը, որի գաղափարը պատկա- նում էր ավստրալացի մաթեմատիկոս եւ մանկավարժ Փիթեր Հալորանին: Նրա մոտ

առաջացավ առաջադրանքները դժվարու- թյան կատեգորիաների բաժանելու եւ դրանք բազմակի ընտրության թեստի տես- քով առաջարկելու գաղափարը: Մրցույթն իր «Կենդրոն» անվանումը ստացել է՝ ի պատիվ ծագման երկրի 1991 թվականին Ֆրանսիայում: Այնուամենայնիվ, 1995 թվա- կանից ի վեր մրցույթը չի անցկացվում հենց Ավստրալիայում:

1994 թվականին Ավստրալիայի ութ առաջատար համալսարանները կազմակեր- պեցին փոխնախագահների ոչ պաշտոնա- կան խումբ, իսկ 1999 թվականին այս ասո- ցիացիան պաշտոնապես ձեւավորվեց «Ութնյակ խումբ» (անգլ.՝ G8) անվան տակ: Այն հաճախ հանդես է գալիս որպես լրբիս- տական խումբ իր անդամ բուհերի շահերի համար: Բոլոր հիմնական համալսարանա- կան կամպուսները (Կամպուս (լատ.՝ cam- pus) — համալսարանական (ուսանողա- կան) քաղաք) գտնվում են Ավստրալիայի վեց խոշորագույն մետրոպոլիայի քաղաք- ներում:

Դպրոցական կրթության առանձնա- հատկությունները Ավստրալիայում.

- Պարտադիր է երկրի 5-17 տարեկան բոլոր քաղաքացիների համար
- Կրթական անհատական չափորոշիչ- ներ յուրաքանչյուր նահանգի կամ տարած- քի ներսում
- Կրոնական դպրոցների մեծ տոկոսա- յին ցուցանիշ (մինչեւ 34%)
- Գիտելիքների զնահատման սեփական համակարգ 4-քայլ՝ HD-D-C-P:

Կրթությունը Ավստրալիայի միջնա- կարգ դպրոցներում.

Ավստրալիայում դպրոցական կրթու- թյունը բաղկացած է երկու մակարդակից՝ տարրական եւ միջնակարգ: Երեխաները տարրական դասարաններ են հաճախում 5- 6 տարեկանից, կրթական միջին աստիճան են անցնում 13-15 տարեկանում: Երկրի նա- հանգներն ու տարածքները լայն լիազորու- թյուններ ունեն անհատական ուսումնական պլանի ձեւավորման առումով. իրենց տա- րածքում գտնվող յուրաքանչյուր դպրոց պետք է հավատարիմ մնա ուսումնական պլանի շրջանակին: Այնուամենայնիվ, ու- սումնական հաստատությունները կարող են ներառել պլանում եւ առանձին լրացու- ցիչ առարկաներ՝ իրենց հայեցողությամբ:

Ավստրալիայի դպրոցներն սովորողնե- րին ընդունում են հունվարի վերջին կամ փետրվարի սկզբին, ուսումնական տարին ավարտվում է դեկտեմբերին: Երկրում ար- ծակուղղների եւ տոնական օրերի հետ կապված միասնական չափանիշ չկա. այդ- պիսի հարցերը յուրաքանչյուր հաստատու- թյան կողմից լուծվում է առանձին:

Ավստրալիայի դպրոցները լինում են պետական, մասնավոր եւ կրոնական: Մաս- նավոր դպրոցներն առավել հաճախ կապ- ված են որեւէ դավանանքի հետ եւ դեկա- վարվում են տեղական եկեղեցու կողմից:

Երկրի բոլոր մշտական բնակիչներն ու քա- ղաքացիները հնարավորություն ունեն անվճար սովորելու. երկրի բոլոր դպրոցա- կանների մեկ երրորդից ավելին սովորում է պետական ծախսերով, մոտ 34%-ը սովո- րում է մասնավոր (անկախ) կամ կրոնական ուսումնական հաստատություններում, իսկ 1%-ը սովորում է տանը. կրթության այս ձեւն ամրագրված է օրենքով:

Օտարերկրյա սովորողի համար մաս- նավոր դպրոցները մեծագույն հետաքրք- րություն են ներկայացնում մի շարք պատ- ճառներով.

- դրանք, որպես կանոն, պահպանում են ընդհանուր ունեն իրենց սեփական բնակավայրերը՝ ապրելու համար,
- դրանցից շատերն ունեն լեզվի նախա- պատրաստական կենտրոններ, որտեղ ար- տերկրից ժամանած սովորողը կարող է ստանալ անհրաժեշտ լեզվաբանական ու- սուցում,
- դրանք տեխնիկապես ավելի լավ հա- զեցած են եւ կարող են առաջարկել ավելի բազմազան ժամանցային եւ սպորտային ծրագրեր,
- կրթության որակը սովորաբար մի փոքր ավելի բարձր է, քան պետականնե- րում, եւ հաճախ իրականացվում է լրացու- ցիչ մեթոդների կիրառմամբ, ինչպիսին է օրինակ Սոնտեստրիի մեթոդը (Կրթության ոլորտում ուսուցման մեջ իր առաջարկած նոր մեթոդներով ու մոտեցումներով հայտ- նի իտալացի բժիշկ, մանկավարժ Մարիա Սոնտեստրիի (1870-1952թթ.)):

Ընդունելության պահանջներ.

Ավստրալական մասնավոր դպրոց ըն- դունվելու համար ընդունելության պա- հանջները նման են Եվրոպայի պահանջնե- րին: Գրանցվելու համար հարկավոր է ներ- կայացնել անգլերեն լեզվի իմացության թեստի (IELTS) արդյունքները եւ քաղվածք դպրոցական վկայականից՝ վավերացված թարգմանությամբ, որոշ դեպքերում որոշա- կի առարկաների լրացուցիչ թեստավորում անցնելու նպատակով:

Ավստրալիայում բուհերի ընդունելու- թյան քննություններ չկան, բուհերում հաշ- վառումը հիմնված է միջնակարգ կրթության վկայականում սովորողի վարկանիշի վրա՝ ATAR (Australian Tertiary Admission Rank): Որքան բարձր է բարձրագույն ուսումնա- կան հաստատության կարգավիճակը, այն- քան բարձր է ընդունելության նվազագույն միավորը: Իր հերթին, որքան բարձր է դպ- րոցն ավարտածների միջին միավորը, այն- քան բարձր է դպրոցի վարկանիշը:

Ավստրալիայի միջնակարգ կրթության վկայականը բացում է երկրի բոլոր համալ- սարանների դռները: Եթե սովորողը նախա- տեսում է ուսումը շարունակել Եվրոպայի կամ ԱՄՆ-ի համալսարաններում, ապա վերջին երկու տարիներին նա կարող է սո- վորել Միջազգային բակալավորիատի (IB) ծրագրով, որը հատուկ նախագծված է Հին աշխարհի եւ հյուսիսային Ամերիկայի հա-

մալսարաններ ընդունվելու համար:

Ավստրալացի սովորողները, ովքեր ցանկանում են ստանալ բարձրագույն կր- թություն, ընդունվում են համալսարան կամ TAFE քոլեջ: Տեխնիկական եւ հետագա կր- թություն Ավստրալիայում կամ TAFE /teif/ հաստատությունները տրամադրում են հիմ- նականում մասնագիտական բարձրագույն կրթության լայն շրջանակ, հիմնականում ազգային կրթական համակարգի համա- պատասխան որակավորման դասընթաց- ներ: Ներառում են բիզնես, ֆինանսներ, հյուրընկալություն, զբոսաշրջություն, շի- նարարություն, ճարտարագիտություն, կեր- պարվեստ, տեղեկատվական տեխնոլոգի- աներ եւ հասարակական աշխատանքներ: TAFE-ի անհատական հաստատություննե- րը (ընդհանուր առմամբ բազմաթիվ մաս- նաճյուղերով) հայտնի են որպես քոլեջներ եւ ինստիտուտներ՝ կախված նահանգից կամ տարածքից: 2002 թվականից TAFE սեկտորը տրամադրում է բակալավորի եւ նույնիսկ ասպիրանտուրայի աստիճաններ (հիմնականում Վիկտորիայում)՝ մասնավո- րապես արդյունաբերության վրա հիմնված հետազոտությունների ոլորտներում: Այսօր Ավստրալիայում գործում են ավելի քան 100 TAFE հաստատություններ:

Ավստրալիայի բարձրագույն կրթական համակարգը ամենաերիտասարդ, բայց ակադեմիկական առումով ամենաուժեղնե- րից մեկն է աշխարհում: Քանի որ այն կա- ռուցվել է բրիտանական համակարգի սկզ- բունքով, այն ունի այնպիսի առանձնա- կատկություններ, ինչպիսիք են դասա- վանդման բարձր որակը, ուսանողների ան- կախության բարձր աստիճանը եւ գիտա- կան հետազոտությունների շեշտադրու- մը: Ավստրալիան ունի 40 համալսարան եւ մոտ 350 քոլեջ, որտեղ ավելի քան 300,000 միջազգային ուսանողներ կան: Ավստրալի- ա սովորելու եկող ուսանողների մեծ քա- նակությունը զարմանալի չէ. ավստրալա- կան դիպլոմները ճանաչված են ամբողջ աշխարհում:

Ինչպես ընդհանուր կրթությունը, Ավստ- րալիայում բարձրագույն կրթությունն ունի երեք մակարդակ.

Ավստրալիայում բարձրագույն կրթու- թյան երեք մակարդակներն են՝ բակալավ- րիատ (3-4 տարի), մագիստրատուրա (1-2 տարի) եւ ասպիրանտուրա:

Համալսարան ընդունվելու համար անհ- րաժեշտ պայման է դպրոցի 12-րդ դասա- րանն ավարտելը: Թեեւ առանձին դեպքերի համար կան լրացուցիչ սխեմաներ: Ավստ- րալիան ունի ինչպես պետական, այնպես էլ մասնավոր կրթական հաստատություններ: Նրանց տարբերությունները ուսումնական գործընթացի ֆինանսավորման եւ նյութա- կան բազայի մեջ են:

2009 թվականի դրությամբ Ավստրալիա- յում բարձրագույն կրթության համակար- գում կա 41 համալսարան (37 պետական, 2 մասնավոր եւ 2 ֆակուլտետ արտասահ- մանյան բուհերում): Ավստրալիայի վեց ամենահին համալսարանները կազմում են Sandstone համալսարանների խումբը (Անգլերեն Sandstone Universities; Ադյու- սակ 4), իսկ ութ խոշորագույնները կազմում են հեղինակավոր Ութ խումբը (G8):

Կրթության արժեքը.

Ուսման վարձի տարեկան միջինը կազ- մում է 25-40 հազար ավստրալիական դո- լար: Սրան անհրաժեշտ է նաեւ ավելացնել կեցության ծախսերը (15-20 հազար AUD) եւ լրացուցիչ ծախսերը (ամսական 1000 AUD):

Արդա ՍԱՐԳՍՅԱՆ  
ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի չափորոշիչ լրամշակման եւ զարգացման բաժնի պետ

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

Կանանց ախպեր

Է՛յ կանանց ախպեր,  
Է՛յ ճանանց ախպեր,  
Արի՛, քեզ հետ բեր  
Արեւի շողեր.  
Բեր անուշահոտ  
Ծիւ, ծաղիկ ու խոտ,  
Կարկաչուն վըտակ,  
Երկինք կապուտակ,  
Խատուտիկ հավքեր,  
Ջրընգան երգեր,  
Գառների մայուն,  
Խաղ, ուրախություն.  
Է՛յ կանանց ախպեր,  
Է՛յ ճանանց ախպեր:



Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

Մանկություն

Հուրհրում էր արեւն ուրախ,  
Գետն էր գնում քաղցրակարկաչ.  
Չորս դիս՝ գարնան կարմիր ծիծաղ,  
Վարդեր կարմիր, կարմիր կակաչ:  
  
Արտույտն երգով ճախրում էր վեր.  
Արտներում խրխիւնց ու կանչ.  
Չորս դիս՝ գարնան կանանց թեւեր,  
Կանանց հովեր, ծովե՛ր կանանց:  
  
Մեր մանկական ճիչն էր թնդում  
Դաշտերի մեջ ցողաթաթախ.  
Խայտուն էինք զնրուխտ գետում, -  
Եվ զրգնում էր արեւն ուրախ...



Վահան ՏԵՐՅԱՆ  
Գարուն

Գարունը այնքան ծաղիկ է վառել,  
Գարունը այնպես պայծառ է կրկին.  
Ուզում եմ մեկին քնքշորեն սիրել,  
Ուզում եմ անուշ փայփայել մեկին:

Այնպես զգվող է երեկոն անափ,  
Ծաղիկներն այնպես նազով են փակվում.  
Շուրջըս վառված է մի անուշ տազնապ,  
Մի նոր հուզում է սիրտըս մրրկում...

Անտես զանգերի կարկաչն են լսում,  
Իմ բացված սրտում հնչում է մի երգ.  
Կարծես թե մեկը ինձ է երազում,  
Կարծես կանչում է ինձ մի քնքուշ ձեռք...

Միսաք ՄԵԾԱՐԵՆՑ

Երազ օրեր

Կարմիր ծաղիկ մը գարունի  
Առտու մ՝ ինձի նըվիրեցիր.  
Ըզգացի թե տենդեր ունի  
Երազկոտ միտքս ուշացիր:

Եվ ըղձակաթ իմ հեզ հոգիս  
Ըզգաց սիրտիդ հուրքն արծարծում,  
Ու մետաքսե ուղի մը գիս  
Մեր-ծաղիկին տարավ ածուն:

Խանդաղատանք մը հորդեցավ  
Իմ նըվաղկոտ լանջքիս տակ՝ ուր  
Դողաց սիրտ սարսուռն անցավ՝  
Ու թովանքը համբույրին հուր:

Հոն ժղպտեցավ կյանքը ինձի,  
Հըմայքներու հույլովն անցավ,  
Եվ ուրվական մը կասկածի  
Անոր մոտեն երբեք չանցավ:



Դանիել ՎԱՐՈՒԺԱՆ

Գարնան անձրեւ

Դաշտերուն վրա իր տրտմությամբ համառոտ  
Անձրեւը չէ՛ ասիկա:  
Գարնան ջաղքն է՝ որ ցանքերուն վրա անհուն  
Լուսացընցուղ կը տեղա:

Աստղերն անհայտ, կարծես հալած արեւեն,  
Տեղատարափ կը թափին,  
Եվ կը լըվան իրենց լույսին մեջ փաղփուկ  
Անդաստաններն ու այգին:


Կապույտն հանկարծ կու լա բուռն ծիծաղեն,  
Եվ կը տեղա աղամանդ.  
Կը լուսնան կույր աղբերակներն ու կ'երգեն  
Իրենց ծընունդն արգավանդ:

Անհունն ի վար կը հեղեղվին շառաչով  
Մեծ կաթիլներ շափյուղա,  
Լի արեւով, ցնծությունով, կապույտով,  
Ծիծաղներով սատափյա:

Մարգերը թաց կ'արտաշընչեն զովություն...  
Կը լըվացվին գառնուկներ...  
Բո՛ւյրը հողին, հողին բո՛ւյրը, ծավալուն  
Կը լեցնե գյուղն ու եթեր:

Ու արտերո՛ւս, արտերո՛ւս մեջ քրտնաշատ  
Իմ ցորյաններս համեցող  
Նոր ուժերով հորդահոսա՛ն կ'ընծյուղին  
Կայլակներու մեջ ի լող:

Եվ մաքրված անտառին մեջ, այս պահուս,  
Ըստ իմ գյուղիս հեքիաթին-  
Կը ծնի եղնիկն, գոտիին տակ ծիրանի,  
Եղնորդ մը՝ նման լուսինին:



Եղիշե ՉԱՐԵՆՑ

Տաղ սիրո

ձոնված ապագայի պարմանիներին  
(հատված)

Ա

Յուրաքանչյուր անգամ, երբ գարունը բացվում է  
Եվ նոր կյանք է մտնում նոր մի սերունդ -  
Արեգակը թվում է ծնծղա եւ երկիրը բուրում է  
Անկրկնելի բույրով բուր պարմանի սրտերում: -

Յուրաքանչյուր անգամ եւ ամենայն ուրույնությամբ,  
Յուրաքանչյուր անգամ տարբեր ու առանձին,  
Յուրաքանչյուր անգամ անհո՛ւն մի թարմությամբ,  
Եվ յուրաքանչյուր անգամ - անծիր...  
  
Ո՛վ դու, որ առաջին անգամ իբրեւ քեզ ընծայած  
Եվ միայն քեզ համար սահմանած մի բարիք -  
Ընդունելու ես կույսի խոստումնալից հայացքը  
Քո օրերի դժնյա ճանապարհին, -  
  
Որ իբր տոթ ողկույզ՝ ճնլելու ես շրթերը  
Եվ գգվանքները դեռ դաշն քո ընկերուհու -  
Ահավասիկ երգում եմ ես մեղական քո սերը,  
Իբրեւ հավերժական խորհուրդ...



Պարույր ՍԵՎԱԿ

հատված «Երգ երգոց» պոեմից

Գարունն այս անգամ ձմռանը եկավ, Այն էլ հյուսիսում. Ես բոլորովին չէի սպասում, Ձմեռն այս վկա: Քեզ չփնտրեցի՛, չըրողեցի՛ Եվ... գտա հանկա՛րծ Ինչպես դու մի օր անունդ ես գտել, Օ Սուլամի՛թա:

Գուրգեն ՄԱՅԱՐԻ

Գարուն, հավատա...

Գարուն, հավատա՛, ես քեզ չեմ դավել. Գարուն իմ երկրի հողերի վրա, Լեցուն է ահա նորից իմ գավը, Ու խմում եմ ես կենացդ ահա...

Գեորգ ԷՄԻՆ

Հայաստանի գարունը

Ամեն գարուն՝ ինչքան ծանո՛թ, Այնքան նո՛ր է ու ցանկալի՛. Ամեն գարուն մի նո՛ր ծայնով Ու նոր սիրո պե՛ս է գալիս.

Տե՛ս, հավքերը հազարերանգ Հին բնե՛րն են վերադառնում. Ամե՛ն տեղ են դառնում նրանք՝ Բայց ուրի՛շ է Հայաստանում. — Հայաստանում նրանց նման Պանդուխտ հայե՛րն են ետ դառնում, Ու բույն շինում, որ միշտ մնան Հայության բո՛ւյն Հայաստանում...

Տե՛ս, իր փեշերը հավաքած, Ձմեռը սա՛րն է բարձրանում, Ամե՛ն տեղ է սա անկասկած՝ Բայց ուրի՛շ է Հայաստանում. — Ձյունից ծնված ամեն առվակ Մի գետի չափ գո՛րծ է անում, Որ քա՛րն անգամ ծաղիկ դառնա Մեր քարաշա՛տ Հայաստանում...

Տե՛ս, բուրո՛ւն են ծաղիկ ու սեզ, Եւ հին սերերը՝ նորանո՛ւն. Ամե՛ն տեղ է գարունն այսպես՝ Բայց ուրի՛շ է Հայաստանում. Դարավոր սի՛րտն է հայկական. Իմ աչքերի դեմ մանկանում... Չէ՛, գարնանն այս աշուն չկա՛ - Հավե՛րժ է նա Հայաստանում...

Մատթեոս ԶԱՐԻՖՅԱՆ

\* \* \*

Հիմա աղվոր գարուն է. Եւ անցյալ օր, Մղում մ'համառ նորեն քայլերս մղեց հոն Խորն ամայի այն դաշտերուն. Եւ հուզումես ինկա ծունկի

Կացինահար ծառն էր նման շիրմաքարի - Սեւ գերեզման մը խոժոռ — Բայց իր կողեն Արծվաթռչիչ նիզակներու խրոխտանքով՝ Բարունակներ ժայթքեր էին դեպի երկինք:

Անոնց մեջեն Նորափետուր թռչուններ ե՛րգ կ'երգեին...

Հովհաննես ԾԻՐԱԶ

Գարնանամուտ

Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս, Որ վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ, Ու երկինքը հոգուս մեջ, ու արեւը աչքերիս, Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք, Ու քայլեցի խայտալով ու շաղ տալով մայթերին Մանուշակներ ու վարդեր ու շուշաններ ծյունաթույր, Ու մարդիկ ինձ տեսնելով՝ իրենց հոգնած աչքերին Տեսան ուրիշ մի աշխարհ, գարուն տեսան նորաթույր, Ինչ թարմություն,- ասացին,- ի՛նչ թարմություն,- ու բացին Լուսամուտներն իմ առջեւ, ու ես իմ սիրտը բացել՝ Անցնում էի երգելով ու շաղ տալով մայթերին Մանուշակներ ու վարդեր ու հասմիկներ հոգեթով, Կարծես մի ողջ բնություն մի պատանի էր դարձել, Քաղաք իջել լեռներից՝ կանցներ զմրուխտ հեքիաթով...

Ծուշանիկ ԿՈՒՂՈՒՆՅԱՆ

Գարունն եկավ

Գարունն եկավ... միտքը ծաղկեց Ել չեմ երգի ցավ ու դարդ. Վըշտի ժայռից ես գահընկեց Ընկա հովիտ ծաղկազարդ:

Եւ խրվելով իմ քրնարի Նագուկ մեջքին ոսկեթել Գարուն կերգեմ-աչեր յարի՛ Որոնք գիտեն սիրտ դյուրել:

Ահա շուտով ես վար կառնեմ Իմ քրնարից սրգի քող Ազա՛տ երգով կը սավառնեմ Կիջնեմ սրբտիղ որպես ցող:

Գարունն եկավ. փո՛ւչ աշխարհի Ել չեմ երգի ցավերից՝ Եւ երկնառաք իմ քրնարի Կը վանեմ թախիժ լարերից.

Ակսել ԲԱԿՈՒՆՏ

Պատառիկներ նովելներից

Նստել եմ ծիրանի ծառի տակ, տաքանում եմ ինչպես քարը, ծյունից մրսած գետինը, ծառերը, որ դեռ մերկ են ու արդեն թխանում են արեւի ջերմությունից:

Մերկ ծառերի արանքից երեւում է քաղաքը, գունավոր տները: Ծխի ու փոշու կապտագույն շղարշ է փռված քաղաքի վրա: Ավելի հստակ են երեւում մոտակա կավե տները, այգիների մեջ ընկած ամայի հնձանները:

Քամին խշշացնում է չոր տերեւները, որոնք թռչում են քարերի վրայով, իրար հրում, փաթաթվում ոտքերիս եւ քշիչում, ինչպես առվակը, գարուն է, գարուն է...

«Բրուտի տղան»

\* \* \*

Երեկոյի տաք անձրեւը նոր ծաղկած ծառերին, մայթի քարերին ու ծանր կավահողին բաշխել էր գով, պղտոր ջրի լճակներ ու ծանր ցեխ: Սպիտակ ամպերը սարերից սողացել էին դեպի քաղաք եւ անգուլիս կարավանի նման դանդաղ ու մունջ պտույտ էին անում փողոցներով, քավում կտուրներին:

Տների բարձր հարկերը չէին երեւում ամպի սպիտակ թուղաների մեջ: Նրանք օրորվում էին, իրենց հետ օրորում տները, հեռագրասյուները, էլեկտրական լամպերը եւ նրանց ցոլքը՝ անձրեւաջրի պղտոր լճակներում:

«Սեւ հացը»

\* \* \*

Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույն: Քարի մոտ է բսնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ: Արեւից քարերը տաքանում են, եւ երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեթվում է, գլուխը հենում քարին: Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան:

«Ալպիական մանուշակ»

Համո ՍԱՅՅԱՆ

Գարունը հայերեն է գալիս

Ձյուներդ հայերեն են լալիս, Հայերեն են հորդում ջրերդ:

Ձորերդ շնչում են հայերեն, Ձոռերդ ննջում են հայերեն, Հայերեն են տանջում ցավերդ:

Հավքերդ երգում են հայերեն, Խոփերդ հերկում են հայերեն, Հայերեն են տոկում գրերդ:

Որքան էլ ձեռից գնացել, Դու էլի հային ես մնացել, Հայերեն են հառնում սարերդ:

Արեւդ հայերեն է ծագում, Ծառերդ հայերեն են ծաղկում, Հայերեն են պայթում բառերդ:

Թող Աստված եղածը պահի, Եվ հետո ինչ էլ պատահի, Ձյուներդ հայերեն են լալու, Գարունդ հայերեն է գալու, Հայերեն են գալու դարերդ:

Հունդերդ ծլում են հայերեն, Ձեռքերդ կռում են հայերեն, Հայերեն են լռում քարերդ:













